

Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
նչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

411-570

ՀԿ(Բ)Կ ՅԵՐԿՈՍԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

Ա. ՄԻՐԶԱԲԵԿՅԱՆ




ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ

Զ Տ Մ Ա Ն

Մ Ա Ս Ի Ն

ԿՈՒՍԱԿՐԱՏ

1933 ՅԵՐԵՎԱՆ



APM.

411-570

2-2293₃

ՀԿ(Բ)Կ ՅԵՐԿՈՄԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

~~2-2293a~~

Ա. ՄԻՐԶԱԲԵԿՅԱՆ

31173

ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԶՏՄԱՆ

Մ Ա Ս Ի Ն

(ՀԱՌԹ ԵՐԵՎԱՆԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԵԱՆ ԱԿՏԻՎԻ ՆԻՍՏՈՒՄ)



20727

ԿՈՒՍԱԿՐԱՏ 1933 ՅԵՐԵՎԱՆ

A 35554

Մրազրի 1. Արմայն

Հանձնված է արտադրության 4 հալիսի 1933 թ.

Ստացված է սպառելու 7 հալիսի 1933 թ.

Հրա. № 122. Տիւրմ 1000. Գլանիս 7756 (թ)

Գուտիւրաի սպառման. Պատկեր № 10. 46,000 քա. մե.

ԿՈՒՍԱԿՅՈՒԹՅԱՆ ԶՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Ընկերներ, 1917 թվի հոկտեմբերին խորհրդային մեծ Միության պրոլետարիատը կատարեց աշխարհի մեծագույն հեղափոխությունը: Լենինի կուսակցության կողմից զլխավորված մեր պրոլետարիատը միջազգային հակահեղափոխության հետ պոտեմարտի բռնվելով՝ շահեց համաշխարհային-պատմական նշանակություն ունեցող հաղթանակ: Քաղաքացիական պատերազմը վերջացնելուց հետո ԽՍՀՄ-ի պրոլետարիատը փայտուն կերպով ծավալել և սոցիալիզմի կառուցումը մեր յերկրում: Տեղի չե ունենում մեր յերկրի՝ խորհրդային Միության մեծագույն փոխակերպումը անասապես և կուլտուրապես հետամնաց յերկրից (վայրենի յերկրից) անասապես առաջավոր, կապիտալիստական աշխարհից անկախ յերկրի: Սոցիալիզմի ամբողջ, միջազգային հեղափոխության բազայի նսրացումը դանդաղ և հաստատուն բազուկում: Հենց նրա համար, վոր մեր կուսակցությունը, Լենինի կուսակցությունը միաժամանակ միջազգային հեղափոխության ավանդարդն և հանդիսանում, միայն նրա համար, վոր այդ կուսակցությունը ծնունդ և առել ու դեկավարվել այնպիսի առաջնորդների կողմից, ինչպիսիք են Լենինը և Ստալինը,— նա մեծագույն հաջողություններ ձեռք բերեց մեր յերկրում: Ուրիշ ինչ կուսակցություն կարող եր այդպիսի հաղթանակներ ձեռք բերել: Միայն այն կուսակցությունը, վորը գինված և մարքսիզմ-լենինիզմի հեղափոխական թևորիայով, վորն իր շարքերում միավորում և միջազգային բանվոր դասակարգի առաջավոր ջոկատին, կուսակցություն, վորն աճել ու կոփվել և ամեն գույնի ոտորառնիզմի դեմ մղած պայքարում, կուսակցություն, վորն իր ձեռքում ունի բացառապես յերկաթյա

կարգապահութիւն,— ահա այդ կուսակցութիւնն է, ընկերներ, Լենինի և նրա լավագոյն աշակերտ ընկ. Ստալինի ղեկավարած կուսակցութիւնն է, վոր ապահովել է սոցիալիստական շինարարութեան հաջող ընթացքը Խորհրդային Միութիւնում:

Չնայած դրան, ընկերներ, այդ կուսակցութեան մեջ պարբերաբար դրվում է նրա շարքերի գոման հարցը: Խնչ է ասում Համկ(բ)ի ԿԿ-ի վորոշումն այդ առթիւ: Ձեզ հայտնի յէ, ընկերներ, վոր առաջիկա գոման մասին Համկ(բ)ի ԿԿ-ն հանեց հետեյալ վորոշումը. «Հիմք ունենալով 16-րդ կուսկոնֆերենցիայի վորոշումը կուսակցութեան գոման մասին (1929 թ. ապրիլ), Համկ(բ)ի ԿԿ-ն վորոշում է. 1) կուսակցութեան անդամների և թեկնածուների գոտւմ անցկացնել 1933 թվի ընթացքում, 2) սույն վորոշման հրապարակման որից դադարեցնել թեկնածու ընդունելը և թեկնածուներին անգամ փոխադրելը ամբողջ ԽՍՀՄ-ում, թե քաղաքում և թե գյուղում»:

Ձեզ հայտնի յէ, ընկերներ, վոր հետագայում Համկ(բ)ի ԿԿ-ի և ԿՎՀ-ի հունվարյան միացյալ պլենումը համաձայնութիւն տվեց Համկ(բ)ի ԿԿ-ի Քաղբյուրոյի այդ վորոշմանը: Այդ պլենումում ընդունված բանաձևում հանձնարարվեց «Քաղբյուրոյին և ԿՎՀ-ի նախագահութեանը՝ կուսակցութեան գոման գործն աշակե կազմակերպել, վոր ապահովի պրոլետարական յերկաթյա կարգապահութիւնը կուսակցութեան մեջ և կուսակցութեան շարքերը մաքրվեն բոլոր անհոսալի, անկայուն և ներս խցկված տարրերից»:

Ահա, ընկերներ, այն վորոշումները, վոր ընդունեցին Համկ(բ)ի ԿԿ-ի Քաղբյուրոն և ԿԿ-ի ու ԿՎՀ-ի միացյալ պլենումը: Դուք գիտեք, վոր մեր կուսակցութիւնն առաջին անգամը չի գոտւմ անցկացնում: Մեր կուսակցութիւնը գոման խնդրում հենվում է գլխավորապես 16-րդ կուսկոնֆերենցիայի վորոշման վրա, վորն ասում է, թե անհրաժեշտ է կուսակցութեան պարբերական գոտւմ անցկացնել՝ նրա սոցիալական կազմը բարելավելու և կուսկազմակերպութեան քաղաքական մակարդակը բարձրացնելու նպատակով: Դուք գիտեք նաև, վոր կա նույնպես Կոմինտերնի վորոշումը բոլոր այն կուսակցական կազմակերպու-

թյունների վերաբերմամբ, վերոնք մյուս յերկրներում լեզալ գրության մեջ են դառնում:

Ի՞նչ և ասված աղ առթիվ Կոմիտեների վերջման մեջ. «Կոմունիստական կուսակցությունները բոլոր այն յերկրներում, վերանդ Կոմունիստներն աշխատում են լեզալ կերպով, սկսած և կուսակցական կազմակերպությունների անձնական կազմի պարբերական գառմներ (վերացուցակագրություններ) անցկացնեն, վերապի կուսակցությունը սխտեմատիկ կերպով մաքրեն այնանդ խցկլած մանր-բուրժուական տարրերից»:

Ահա, ընկերներ, յերկու հիմնական կուսակցական փաստաթուղթ, վերոնք գրվել են դաման մասին Կենտրոնական Կոմիտեյի ընդունած ներկա վերջման հիմքում: Սեա, ընկերներ, ստացի այն մասին, վեր մեր կուսակցությունը միքանի անգամ անց և կացրել իր շարքերի գառմը, ստուգումը և վերացուցակագրումը: Դուք յերեկ հիշում եք, վեր աղպիտի միջոցառում կիրառվեց 1919 թվին: Կուսակցության գառմ յեղալ 1921 թվին, յեղալ բուհական և խորհրդային Բլիշների գառմ, յեղալ, վերջապես, 1929-1930 թվի գլխավոր գառմը:

Կուսակցության շարքերը սոցիալապես խորթ տարրերից մաքրելու նպատակը հետապնդող բոլոր այս միջոցառումներն անկասկած բարեկամեցին մեր կուսակցության սոցիալական կազմը, մեր կուսակցությունից հեռացրին պատահական, խորթ տարրերին, ամրացրին նրա շարքերի միասնությունը և ել ավելի բարձրացրին մեր կուսակցության յերկաթյա կարգապահությունը: Այս բոլոր միջոցառումներից հետո կուսակցությունը դուրս յեկալ ավելի մարտունակ, ավելի պատրաստ նոր մարտերի և նոր հաղթանակներին: Յուրաքանչյուր գառմ և յուրաքանչյուր ստուգում հատուկ մի ետապ և մեր յերկրի սոցիալիստական շինարարության զարգացման մեջ: Յեթե վերցնելու լինենք, ընկերներ, այս բոլոր մոմենտները կուսակցական շարքերի 1919, 1925 և 1929 թվականների վերացուցակագրման, դաման ու ստուգման հարցերում և վերլուծության յենթարկենք այն, թե ինչով և զեկալարվել մեր կուսակցությունը, յերբ անհրաժեշտ միջոցառումներ և մշակել կու-

սակցության շարքերը սոցիալական խորթ տարրերից մաք-
րելու ուղղությամբ, ապա դուք կհանդեք այն յեղրակա-
ցության, վոր 1919, 1925 և 1929 թվականների այս մի-
ջոցառումներից յուրաքանչյուրին ուղեկցել ե հատուկ մի
ետապ մեր կուսակցության զարգացման մեջ: Որինակ, 1919
թվի վերացուցակագրումը կատարվեց այն մոմենտին, յերբ
տեղի յեր ունենում սպիտակ-զմարդիականների կատաղի
հարձակումը վողջ համաշխարհային հակահեղափոխության
հետ միասին Խորհրդային Ռուսաստանի դեմ: Այդ ցուցա-
կագրումը կատարվեց այն մոմենտին, յերբ կոմունիստնե-
րին մորիլիզացիայի եյին յենթարկում ճակատ ուղարկելու
համար: Կուսակցությանը հարկավոր եր անսլալման ամրաց-
նել իր շարքերը: Շնորհիվ այն բանի, վոր մենք կատարե-
ցինք 1919 թվի այդ ցուցակագրումը, մենք կարողացանք
ստեղծել մարտունակ, ամուր կուսակցություն, վորը կարո-
ղացավ կազմակերպել բանվոր դասակարգին և հաղթել Դե-
նիկինին ու մյուս հակահեղափոխականներին բոլոր ճա-
կատներում: Զիշտ ե, 1919 թվի վերացուցակագրման հե-
տևանքով մեկ յերրորդով կրճատվեց մեր կուսակցության
թիվը, բայց այդ մեջոցառման շնորհիվ կուսակցությանը
հաջողվեց իր շարքերից դուրս շարտել բոլոր մորթապաշտ-
ներին, յերկչոտներին, քաղքենիներին, վորոնք վախենում
եյին քաղաքացիական պատերազմի դժվարություններից և
վտանգներից:

Յերբ մեր կուսակցությունը դարձավ պետական կու-
սակցություն յերկրում, յերբ նա խիստ ամուր կանգնեց
իշխանության գլուխը, նույն մոմենտին կարիերիստական
տարրերն աշխատեցին խցկվել կուսակցության մեջ, և մի-
քանի կարիերիստների, սրիկաների և մորթապաշտների հա-
ջողվեց խցկվել մեր կուսակցության շարքերը:

Յեթե մի հայացք նետեք մեր կուսակցության, մեր
սոցիալիստական շինարարության և ամբողջ յերկրի զար-
գացման բոլոր ետապների վրա, ապա կտեսնեք, վոր մեր
կուսակցության առաջնորդ ընկ. Լենինը և կուսակցու-
թյունն ամբողջապես վերցրած շարունակ հիշեցրել են կու-
սակցությունը ամեն տեսակ խորթ ու խցկված տարրերից
մաքրելու անհրաժեշտության մասին:

Այն առթիւ, թե ինչքան անհրաժեշտ է մեր կուսակցութեան համար պարբերական դառնալը, ընկ. Լենինը դեռ 1920 թվին դրել է հետևյալը. «Մենք վախենում ենք կուսակցութեանը ծայրաստիճան ընդլայնելուց, վերսկսել անխուսափելիորեն կառավարական կուսակցութեան շարքերը կձգտեն խցկվել կարիերիստները և սրիկաները, վերոնք արժանի չեն միայն զնդակահարվելու: Վերջին անգամ մենք կուսակցութեան դռները լայնորեն բաց արինք միայն բանվորների ու գյուղացիների առաջ այն որերին (1919 թ. ձմռանը), յերբ Յուդենիչը միքանի վերստ եր հեղու Պիտերից, իսկ Դենիկինն Ուրյուուժն եր (Մոսկվայից մոտ 350 վերստ հեռու), այսինքն այն ժամանակ, յերբ Խորհրդային հանրապետութեանը մահացու վտանգ եր սպառնում և յերբ ամանաշուրիստները, կարիերիստները, սրիկաները և առհասարակ անկայուն մարդիկ վոչ մի կերպ չէին կարող շահավետ կարիերայի հույս ունենալ (ամէկի շուտ կարող էին կախաղան ու խռտանդումներ սպասել) կոմունիստներին միանալուց»:

Դուք դիտեք, ընկերներ, վոր ընկ. Լենինի առաջարկութեամբ 1920 թվին հայտարարվեց կուսակցութեան անդամների համաքաղրման կուսակցական շարաք: Դա լուրջ միջոցառում եր, վորը կապված եր մեր շարքերի ստուգման ու գտման միջոցառումներին հետ: Այդ այն պահին եր, յերբ մեր կուսակցութեան Մոսկվայի կոմիտեյում, Լեոնայեվսկի նորանցքում, ումը նետվեց, այդ այն պահին եր, յերբ հարձակվում եր Դենիկինը, այն պահին, յերբ Խորհրդային իշխանութեանը և մեր կուսակցութեանը վտանգ եր սպառնում: Այն ժամանակ մարթապաշաները և կարիերիստներն անշուշտ չէին աշխատում մեր կուսակցութեան մեջ մտնել, և հենց այդ պահին եր, վոր ընկ. Լենինի առաջարկութեամբ մեր կուսակցութեան դռները բացվեցին բանվորական մասսաների ու աշխատավոր գյուղացիների լայն խավերի առաջ: Այդ մոմենտը համարանց վտանգավոր եր և լուրջ: Այդ շրջանում արձանագրվեց մեր կուսակցութեան մեջ մտնող մոտ 200.000 մարդ, և կուսակցութեանն իր շարքերն ընդունեց բանվոր դասակարգի լավագույն տարրերին:

1921 թվին, ինչպես դիտեք, դարձյալ ընկ. Լենինի

առաջարկութեամբ Գաղբյուրո առաջարկ մտցվեց սահմանափակելու վոչ-պրոլետարական տարրերի մուտքը կուսակցութեան մեջ: Կուսակցութեանը 1921 թվին անսովոր հեղինակութեան եր վայելում և շնորհիվ այդ ժողովրդականութեան, շնորհիվ այն բանի, վոր նա չափազանց ամբողջու կերպով դեկալարում եր խորհրդային իշխանութեանը, այդ մոմենտին մեր կուսակցութեանից ներս թափանցեցին ամեն տեսակ մեղանական տարրեր, և ահա այդպիսի տարրերի առաջ մեր կուսակցութեան մուտքը փակելու համար ընկ. Լենինի առաջարկութեամբ Համ.Կ(բ)Կ ԿԿ-ի Գաղբյուրոն վորոշում ընդունեց վոչ-պրոլետարական տարրերի մուտքը կուսակցութեան մեջ սահմանափակելու մասին: Յեթե վերցնենք մի այլ ետապ այդ միջոցառումների շղթայում՝ Բոխչեբրի և խորհրդային բլիշների գտումը 1925 թվին,— ապա դուք կհիշեք, վոր կուսակցութեանը պատահաբար չեք դնում այդ հարցը: Այդ բացատրվում ե նրանով, վոր 1921 թվի գտումից հետո այնուամենայնիվ հաջողել եին մեր շարքերը խցկվել առանձին մանր-բուրժուական տարրեր, վորոնք տատանվում և անկայունութուն եին ցուցաբերում տրոցկիզմի դեմ մղվող պայքարում:

Դուք յերևի հիշում եք պարոն Տրոցկու այն նշանավոր լողունը, թե՛ «յերիտասարդութեանն ամենաստույգ բարոմետրն ե հանդիսանում»: Պատահական չեք, վոր հակահեղափոխութեան առաջնորդ Տրոցկին առաջադրում եր այդ լողունը: Ձեզ հայտնի յե նաև այն, վոր պարոն Տրոցկին հենվում եր վոչ-պրոլետարական շարքերի վրա՝ հանձինս մեր կուսակցութեան մանր-բուրժուական տարրերի, մասնավորապես այն մանր-բուրժուական տարրերի, վորոնք խցկվել եին բուհական բլիշները, և այդ ել անպայման պատահական չե: Վերցնենք 1929 թվականը: Մեր կուսակցութեան համամիութենական կոնֆերենցիան վորոշում ընդունեց կուսակցութեան շարքերի գտման և ընդունման մասին: Դուք գիտեք, վոր 1929 թվի գտումն անցկացավ այնպիսի պայմաններում, յերբ կուսակցութեանն անցնում եր վողջ ֆրոնտով ծախալուն սոցիալիստական հարձակման:

Վորպեսզի կուսակցութեանը կարողանա վճռական հաջողութեաններ ձեռք բերել քաղաքի և գյուղի կապիտա-

լիստական տարրերի դեմ մղվող պայքարում, նա պետք է բոլոր այս միջոցառումների շղթայի մեջ վերցնե՝ ամենալուրջ քաղաքական միջոցառումներից մեկը՝ մեր կուսակցութեան շարքերի գաումն ու ստուգումը: Հարկավոր էր շարքերն ստուգելով՝ կուսակցութեանն ազատել բոլոր այն տարրերից, վորոնք խանդարում էին ծավալելու սոցիալիստական հարձակումը, ազատել բյուրոկրատացած, քայքայված վերասերվածներից, այն մարդկանցից, վորոնք անընդունակ էին կիրառելու կուսակցութեան քաղաքականութունը:

Ձեզ հայտնի չե, բնկերներ, վոր մեր շարքերի գաումն հետևանքով կուսակցութեանը պատվով դուրս չեկավ այդ դրութեանից: Առաջին հնդամյակի արդյունքները, քաղաքի և դյուղի կապիտալիստական տարրերի դեմ մղված պայքարի արդյունքները հաստատում են այսօր, վոր կուսակցութեանն այն ժամանակ էլ իրավացի չեր, չերը 1929 թվի կոնֆերենցիայում ընդունում էր այդպիսի լուրջ քաղաքական վորոշում:

Ինչո՞ւմ և այժմ կենտրոնական քաղաքական խնդիրը: Ինականաբար ձեզնից յուրաքանչյուրը կարող է հարց տալ՝ ինչո՞ւմ և այս գաումն հիմնական խնդիրը: Մեր կուսակցութեան ներկա գաումն խնդիրները նույնն են, վորոնք բազմիցս ծառայել են մեր կուսակցութեան առաջ նախկին գաումների, ստուգումների և վերացուցակադրումների ժամանակ: Այդ խնդիրն այն է, վոր անհրաժեշտ է հետադաշում և սամեն կերպ ամբողջնել մեր կուսակցութեանը, վորպես պարուկատար իր տեղի կատարած ղեկավարում, անհրաժեշտ և բարձրացնել մեր կուսակցութեան յուրաքանչյուր անդամի իդեոլոգիական մակարդակը, վոր սոցիալիստական շինարարութեան ուժից և տաղում կոչված է կենսագործելու չափազանց բարդ խնդիրներ: Անհրաժեշտ է, բնկերներ, ուժեղացնել բազմամիլիոն անկուսակցական մասսաների վստահութեանը կուսակցութեան նկատմամբ, խել դուք գիտեք, վոր մեր կուսակցութեանը միակ կուսակցութեանն է, վորն իր բոլոր միջոցառումները սերտորեն շաղկապում է բանվորների, կոլտնտեսականների և աշխատավոր դյուղացիների բազմամիլիոն մասսաների հետ:

Մեր կուսակցությունը խնդիր և դրել վորոշելու, թե յուրաքանչյուր կոմունիստ ինչքան և համապատասխանում այն պահանջներին, վոր նրան առաջադրում և հեղափոխության տվյալ ետապը: Կրկնում եմ, այս բոլոր խնդիրները բղխում են հեղափոխության այն շրջանից, վորն ապրում ենք մենք հիմա: Մեր կուսակցությունը մեծ հաղթանակներ ձեռք բերեց առաջին հնգամյակի պլանների կատարման գործում, նա մեծագույն հաջողություններ ձեռք բերեց ինդուստրացման և կոլտնտեսային շարժման արարելու: Սակայն, ընկերներ, չնայած նրան, վոր մենք յերկրորդ հնգամյակն ենք թևակոխում բացառիկ հաղթանակներով, այնուամենայնիվ յերկրորդ հնգամյակը հրապարակից չի հանում դասակարգային պայքարի հարցը, ընդհակառակը, նա դնում և խորացնում և պրոլետարիատի դիկտատուրայի հետագա ուժեղացման և մեր կուսակցության ամրացման անհրաժեշտությունը: Յեվ վորպեսզի մեր կուսակցությունն այս նոր ետապում կարողանա նույնպիսի պատվով, նույնպիսի հաղթանակներով դուրս գալ, ինչպես առաջին հնգամյակում, անհրաժեշտ և, վոր մենք նախ և առաջ ամրացնենք կոմունիստական կուսակցությունը, նրա շարքերից վտարենք բոլոր նրանց, ովքեր անընդունակ կլինեն յերկրորդ հնգամյակում կենսագործելու սոցիալիստական հարձակման հետագա աճման հետ կապված միջոցառումները և կատարում են դասակարգային հակառակորդի պատվերը: Բավական և հիշել առանձին որինակներ այն պայքարից, վոր մղել և հակահեղափոխությունը պրոլետարիատի դիկտատուրայի դեմ, Խորհուրդների յերկրի դեմ, բավական և հիշել այն կուլակային սարսուռը, վոր տեղի ունեցավ մեր կազմակերպության առանձին ողակներում, մեր յերկրի առանձին շրջաններում:

Վերցրեք Հյուսիսային Կովկասում յեղած սարսուռի որինակները, գյուղատնտեսության և երկտրոարդյունաբերության ասպարեզում կատարված ֆինասարարության որինակները, վորոնք բավական մանրամասն կերպով լուսաբանված են մեր մամուլում: Դուք գիտեք, թե ինչպիսի խանդոտությամբ և երկտրոարդյունաբերության ֆինասարարներին պաշտպանում բուրժուական խոշոր յերկրներից

մեկը՝ Անդրիան։ Ձեզ հասկանալի չե, թե ինչո՞ւ մեր կուսակցութեանն իր ուշադրութեան կենտրոնականն ե զարձրել մեր շարքերը բոլոր սպորտունիստական և մանր-բուրժուական տարրերից մաքրելու լուրջ քաղաքական խնդիրը։ Վնասաբարութեանը, սարսափը, կուլակային դիմադրութեանը մեր կուսակցութեանը համոզում են այն բանում, թե ինչքան սուր ե դժված դասակարգային պայքարը, ինչքան ուժեղ և նախկին մարդկանց ատելութեանը մեր կուսակցութեան նկատմամբ, խորհրդային իշխանութեան գործադրած միջոցառումների նկատմամբ։ Միայն սպորտունիստները, միայն խորթ տարրերը, միայն այն մարդիկ, ովքեր չեն հասկացել մեր կուսակցութեան հիմնական միջոցառումները, — կարող են այս լուրջ քաղաքական միջոցառումը գնահատել իրրե վաճ ալ ինչ, չեթե վաճ մեր կուսակցութեան իրրե թե թուլացումը։ Միայն յերկերեսանիները և ամեն տեսակ հակահեղափոխական տարրերը, վորոնք դասակարգային թշնամու պատվերն են կատարում, միայն նրանք կարող են ալդպես գնահատել մեր միջոցառումները։

Ընկերներ, դասակարգային թշնամին մեր յերկրում ջախջախված ե, բայց վերջնականապես չի վաճնչացված։ Մեր անդրկոմիտայան պայմաններում, վորտեղ դասակարգային թշնամին մանևվրում ե աղգային բարդ խճճվածքում, պետք ե ավելի աչալուրջ լինել՝ դասակարգային թշնամուն վերջնականապես ջախջախելու, կապիտալիստական սղակման դեմ մեր յերկրի պաշտպանութեանը կաղմակերպելու, մեր սոցիալիստական հայրենիքի պաշտպանութեանը պատրաստ լինելու համար։

Ահա թե ինչո՞ւ, ընկերներ, կուսակցութեանն ընդունել և այս վորոշումը։ Այս վորոշումը պատահական չե, դա կուսակցութեան միջոցառումներից մեկն ե միայն, վորը բղխում ե մեր կուսակցութեան գլխավոր գծից, ինչպես որինակ՝ սոցիալիստական սեփականութեան պաշտպանութեան հարցը, գործալքումների հարցը, ՄՏԿ-ներին կից քաղբաժիններ կաղմակերպելու հարցը։ Այս բոլորը, ընկերներ, մեր յերկրում սոցիալիստական հետադա կառուցման համար անհրաժեշտ միևնույն միջոցառումների շղթան են հանդիսանում։

Այսպիսով, մեր կուսակցութեան գտման վերոշուած չի կարելի դիտել իբրև ինչ-վոր առանձնացած, ինչ-վոր անջատ բան բվոր այն քաղաքական միջոցառումներէց, վոր կուսակցութեանը կիրառեց 1932 թվին: Ինչհետև, ընկերներ, նա կիրառում է այդ միջոցառումները: Վերովհետև մեր կուսակցութեան առաջ դրված են նոր խնդիրներ, խիստ բարձրանում են յուրաքանչյուր կադմակերպութեան դերը և նրան առաջադրվող պահանջները, եւ ավելի ուժեղանում է յուրաքանչյուր կոմունիստի դերը, նրա՝ իբրև ավանգարդի դերը այն աշխատանքի առանձին ողակներում, վորին կոչված է կուսակցութեան տվյալ անդամը:

Ընկերներ, շնորհիվ այն մեծ հաջողութեաններին, վոր մենք ունեցանք առաջին հնգամյակում, շնորհիվ մասսաների քաղաքական վերելքին և ակտիվութեանը, կուսակցութեանը 2 և կես տարում աճելով դարձավ մի մեծ կադմակերպութեան, և այժմ նրա շարքերում հաշվվում է 2,5 միլիոն մարդ: Ինչ են գրում ԿԿ-ն և ԿՎՀ-ն կուսակցութեան գտման վերաբայով վերոշման մեջ: ԿԿ-ն և ԿՎՀ-ն արձանագրում են հետևյալը.

«... կուսակցութեան մեջ մասսայական ընդունելութեան կատարելիս, վորպիսին տեղերում յեղել է հաճախ միահամուռ կերպով և առանց խնամքով ստուգելու, կուսակցութեան շարքերն են խցկվել խորթ տարրեր, վորոնք իրենց կուսակցական լինելն ոգտագործում են կարիերիստական և մորթապաշտական շահերի համար, խցկվել են յերկերեսանի տարրեր, վորոնք խոսքով յերդվում են, թե հավատարիմ են կուսակցութեանը, իսկ գործով փորձում են վիժեցնել նրա քաղաքականութեան կիրառումը:

Մյուս կողմից, կուսակցութեան անդամների մարքս-լենինյան դաստիարակութեան անբավարար դրութեան պատճառով կուսակցութեան մեջ քիչ չեն թեպետ աղնիվ, խորհրդային իշխանութեանը պաշտպանելու պատրաստ ընկերներ, վորոնք, սակայն, կամ բավականաչափ կայուն չեն, չեն հասկանում կուսակցական կարգապահութեան վորդին ու պահանջները, կամ քաղաքականապես կիսադրադետ են, չգիտեն կուսակցութեան ծրագիրը, կանոնադրութեանը, հիմնական վերոշումները և այդ պատճառով չեն կարողա-

նում ակտիվ կերպով կիրառել կուսակցութեան քաղաքականութիւնը»:

Ահա թե ինչպե՞ս են ԿԿ-ն ու ԿՎՀ-ն գիտում մեր կուսակցութեան շարքերի դաժան անհրաժեշտութիւնը: Բա՞վական և հիշել այն մի ամբողջ շարք տատանումները, վոր ցուցարներիցին մեր կուսակցութեան առանձին խմբերը, և վոր միայն տատանումներ, այլ բառացի կերպով հակահեղափոխական յերևոյթներ մեր կուսակցութեան գլխավոր գծի դեմ ցույցբարոյ առանձին խմբերի կողմից: Բավական և հիշել այնպիսի ուղորաւնիւթաների, ինչպե՞ս Սլեպկովը, Մորեցկին, Նյամնոյը և հակահեղափոխական թեորիայի մյուս քարոյիչները Պատահական չե, վոր մեր կուսակցութեան շարքերում գտնվեցին մարդիկ, վորոնք մեր կուսակցութեան ձեռք բերած մեծադուշն հաղթանակներից հետո ևս ընդունակ չեղան հակահեղափոխական թեորիա քարոզելու: Յեղան մարդիկ, վորոնք զնացին մեր կուսակցութեան հիմնական, գլխավոր գծի դեմ, ԿԿ-ի դեմ, վորոնք ցանկացան պայքարել մեր կուսակցութեան առաջնորդի, բանվոր գասակարդի առաջնորդ ընկ. Ստալինի դեմ: Այդ ևս, ընկերներ, պատահական չե: Յեւ որեւս ծանոթացա մեր Կենտրոնական Վերահսկիչ Հանձնաժողովի ու քաղաքային կոմիտեի միջանի նյութերի հետ, և պարզվեց, վոր մեզ մոտ ևս քիչ չեն այնպիսի տարրեր, վորոնք վոր մի առընչութիւն չունեն մեր կուսակցութեան կիրառած միջոցառումների հետ, պարզվեց, վոր մեր կուսակցութեան մեջ չեղել են մարդիկ, վորոնք նրա ուղղակի թշնամիներն են հանդիսացել, վորոնք զբաղվել են պետական միջոցների հափշտակութեամբ և վատնումով, վորոնք զբաղվել են գողութեամբ, չեն յենթարկվել կուսակցութեան ԿԿ-ի դիրեկտիվներին դարնանացանի և կամաւանիւթաների լուրջ մոմենտում: Յեթե դուք աչքի անցկացնեք ԿՎՀ-ի և Յերեվանի քաղկոմի բոլոր վորոշումները, ապա դուք կտեսնեք, վոր մեր կազմակերպութեան մեջ, Հայաստանի կոմկուսակցութեան մեջ, քիչ չեն այնպիսի մարդիկ, վորոնց կարելի չե այս կոտեղորիաներից վորեւ մեկում գտել: Այսպե՛ս, որինակ, ձեզ հայտնի չե Հայաստի և մի ամբողջ շարք այլ տնտեսական կազմակերպութիւնների գործը:

Յեւ չեմ կամենում հոգնեցնել ձեր ուշադրութիւնը, բայց այնուամենայնիմ ուզում եմ կանգ առնել ԿՎԷ-ի և Յերքադկոմի վորոշումներից վերցրած միքանի ամենից ամելի բնորոշ մոմենտների վրա: Մեխդրծարանի նախկին տերերից Տեր-Ավետիքյանը խաբեյության ճանապարհով խցկվել և կուսակցութեան մեջ, իր անունը փոխելով Շ. Ավետիսյանի:

Այս Տեր-Ավետիքյանը 1921 թվին Հայաստանի քաղաքացիական պատերազմի ժամանակ ակտիվ կռիւլ և Կարմիր բանակի դեմ Ղամաբլովի ճակատում և Զանգեզուրում, մասնակցել և կոմունիստների սպանութեանը Տաթևում:

Կարմիր բանակի հաղթանակից և դաշնակցական ամառնաշուրթայի լիկվիդացիայից հետո Շ. Ավետիսյան—Տեր-Ավետիքյանը փախել և Պարսկաստան: Քողարկելով իր հակահեղափոխական անցյալը, վերադարձել և Խորհրդային Հայաստան, 1925 թվին խցկվել և բանվորութեան շարքերը, այնտեղից անցել և Կարմիր բանակը, վորտեղ դաշնակցական քայքայիչ ագիտացիա յի մղել: Քողարկվելով իբրև մեր բանվոր՝ խցկվել և կուսակցութեան մեջ, նույնիսկ ընտրվել և կարբիդի գործարանի բջիջի քարտուղար, միաժամանակ կապված լինելով դաշնակցների հետ:

Կամ մի այլ որինակ «կոմունիստների» գործողութիւններից:

Շինսեկցիայի խանութի նախկին վարիչ վոմն Դանիելյան Գուրգեն սխտեմատիկ կերպով զբաղվել և հափշտակումով, ինքնամատակարարումով, ապրանքները բարձր գներով վաճառելով և տարբերութիւնը յուրացնելով, մասնավոր շուկայում իրացնելու համար զանազան մարդկանց և սպեկուլյանտների ապրանք բաց թողնելով:

Կամ թե Վեդու շրջանից Միրզատչյան Խաչատուրի գործը, յոր կուսակցութեան անդամ և 1930 թվից: Դեմ և դուրս յեկել վերադաս կազմակերպութիւնների վորոշումներին՝ դաշտերում մնացած բամբակը հավաքելու մասին, դեմոբիլիզացիայի յի յենթարկել կոլտնտեսականներին և ինքը հրաժարվել և գնալ դաշտում մնացած բամբակը հավաքելու:

Կամ թե Հայարդշինի տրանսպորտի բջիջի գործը:

վնասարարութիւն, անտնտեսավարութիւն, միջոցների հա-
ժորդատեղում, դասակարգային թշնամու առկայութիւնը
ապարատի բոլոր ողակներում (հաշվապահ, հաշվետար, պա-
հախ, պահեստապետ, 75 ձի սաակեցիներ և այլն):

Այնտեղ ևս կային «կոմունիստներ», «դեկավարներ»,
ժորոնք անտեսութիւնը քայքայման աստիճանին հասցրին:
Այդ «կոմունիստներ» Յենդիբարյանը («դիրեկտոր»), Ս.
Մամոյանը (բջիջի քարտուղար), դարձի վարիչ Խաչա-
տրյանը այն աստիճանի լիախաղել էին, ժոր իրենց մեղա-
ժոր չեցին համարում:

Կամ մի այլ որինակ՝ Սարգսյան Թորիկ, կուսակցու-
թյան թեկնածու 1930 թվից, չի մուծել մեկ տարվա ան-
դամովարը, չի մասնակցել կուսակցական կյանքին:

Կամ Նաղարյան Գարեգին, Ստեփանավանից, կուսակ-
ցութեան անդամ 1930 թվից: Հրաժարվել և դուռը դնալ
դուռըբորհրդի նախադահի պաշտոնով:

Ահա, ընկերներ, այդպիսի մարդիկ են խցկվում մեր
կուսակցութեան շարքերը: Ինչի՞ համար յես բերեցի այս
որինակները: Յես այս որինակները բերեցի նրա համար,
ժոր դուք համոզվեք, ժոր Հայաստանի կոմկուսակցութեան
շարքերում ևս քիչ չեն մորթաղաշներ և խցկված տարրեր,
ժորոնք ժոչ մի առնչութիւն չունեն կուսակցութեան հետ:

Ընկերներ, մեր կուսակցութիւնը միշտ դեմ և յեղել
յերկ թմերի, մեր կուսակցութեան քանակական աճման հե-
տեից ընկնելուն: Ընկ. Լենինի բոլոր ցուցումների, մեր
կուսակցական կոնֆերենցիաների բոլոր հետագա վորոշումնե-
րի և մեր կուսակցութեան առաջնորդ ընկ. Ստալինի ցու-
ցումների մեջ դուք բաղմաթիվ ցուցումներ կդանեք այն
մասին, թե մեր կուսակցութիւնը չպետք և ընկնի քանա-
կական աճման հետեից, թե մեր կուսակցութեան հիմնական
ինդիքն և կուսակցութեան սոցիալական կազմի բարելա-
վումը պրոլետարական տարրերի հաշվին: Մեր կուսակցու-
թիւնը միշտ այդպես և դրել այդ հարցը, միշտ այդպիսի
ցուցումներ և աղել ընկ. Լենինը, վորը դրել և, թե՛ «Միակ
կառավարական կուսակցութիւնն աշխարհում, վորը հոգում
և վոչ թե անդամների աղելացման մասին, այլ կուսակցու-
թիւնը «խցկվածներից» մաքրելու մասին, դա մեր կուսակ-

ցուցուցան են, հեղափոխական բանվոր դասակարգի կուսակցուցուցանը»:

ԿԿ-ն և ԿՎՀ-ն զտման խնդիրները վերաբերյալ յերկրորդ բաժնում մատնանշում են, թե զտման ժամանակ այդ խնդիրներն իրագործվում են «ա) կուսակցության անդամների և կուսակցական կազմակերպությունների անկեղծ ու ազնիվ ինքնաքննադատությամբ, բ) կուսակցության վերոշումներն ու ցուցումները կատարելու տեսակետից յուրաքանչյուր կուսակցական բջիջի աշխատանքն ստուգելով, գ) անկուսակցական աշխատավոր մասսաներին զտմանը մասնակից դարձնելով և դ) կուսակցությունից զտելով այն մարդկանց, վերոնք չեն արդարացրել կուսակցության անդամների բարձր կոչումը»:

Հետևաբար, ընկերներ, զտման խնդիրներն են՝ կուսակցությունը մաքրել ամեն տեսակ մոլթապաշտներից, կարիերիստներից և նմաններից, կուսակցությունը մաքրել դասակարգայնորեն խորթ ու թշնամի տարրերից, Սլեպկովի և այլոց տիպի ոպորտունիստներից, այնպիսի մարդկանցից, վերոնք համաճել են կուլակային-բուրժուական իդեոլոգիայի հետ, այնպիսի մարդկանցից, վերոնք խախտում են մեր կուսակցության յերկաթյա կարգապահությունը, վերոնք չեն կատարում կուսակցության և կառավարության դիրեկտիվ ցուցումները, կասկածի յեն յենթարկում մեր կուսակցության գլխավոր դիժը, կասկածի յեն յենթարկում կապիտալիստական տարրերի վրա սոցիալիստական հարձակում գործելու քաղաքականությունը, այնպիսի մարդկանցից, վերոնք յերդվում են կուսակցությանը հավատարիմ լինելու մասին, իսկ գործնականում փաստորեն վիժեցնում են մեր կուսակցության հիմնական միջոցառումները: ԿԿ-ն և ԿՎՀ-ն առաջարկում են այդպիսի մարդկանցից մաքրել կուսակցությունը: Ուստի, ընկերներ, հիմնական խնդիրներից մեկը, վեր գրվում և յուրաքանչյուր կոմունիստի, կուսանդամի առաջ, հանդիսանում և գործնականում պայքարել ամեն տեսակի վերասերականների դեմ, ամեն տեսակի յերկերիսանիների, կուսակցությանը խաբողների դեմ, իր ամենորյա աշխատանքում պայքարել մեր կուսակցության շարքերի յերկաթյա կարգապահության համար: Մատնավոր

բաղին, մեր կուսակցութեան առաջնորդներ ընկ. Անինը և
Բնե. Ստալինն ավելի քան մեկ անգամ մատնանշել և դի-
րեկտիվներ են տվել այն ժամին, վոր մեր կուսակցութեան
չերեաթյա կարգապահութեան հարցը, կուսակցութեան և
կառավարութեան միջոցառումները յուրաքանչյուր կուսան-
դամի կողմից կենսապարծելու հարցը ամեն մի կոմունիստի
չափադանդ կարևոր և յուրջ խնդիրն և հանդիսանում, վոր
այն կոմունիստը, վոր միմեջնում և մեր կուսակցութեան
չերեաթյա կարգապահութեանը, այն կոմունիստը, վորը
դործնականում չի կիրառում մեր կուսակցութեան միջոցա-
ռումները, այդ կոմունիստը փաստորեն ձեռնառ զործ և
կատարում բանվոր դասակարգի թշնամիների համար, այդ
կոմունիստը միանում և դասակարգայնորեն թշնամի տար-
րերի հետ, այդ կոմունիստը դործնականում դիմ և զուրս
դալիս մեր կուսակցութեան բոլոր միջոցառումներին։ Ահա
թե ինչպիսի հիմնական խնդիրներ և դնում կուսակցութեանը
մեր շարքերի դաման առարկեղում։ Ձեզ հայտնի չե կի-ի և
կի՛չ-ի վորոշումներից, վոր բացառապես դաստիարակչական
նշանակութեան ունեցող այլ միջոցառումներին զուգորթաց
կի-ն և կի՛չ-ն հանձնաժողովներին հանձնարարում են կու-
սակցութեան անդամներին՝ թեկնածու և թեկնածուներին
համակրող փոխադրել։ Այդ առթիւ կի-ի և կի՛չ-ի վորոշումը
հեռեւորն և տառաւ։

Եւեռաթի ունենալով այն, վոր վերջին ժամանակներս
Համկ(բ)ի շարքերն անցած կուսանդամների մեջ կան մա-
սամբ այնպիսի ընկերներ, վորոնք նվիրված են բանվոր
դասակարգի դործին և դործնականում՝ արտադրութեան մեջ,
կողմնակցութեաններում՝ ցույց են տվել իրենց հաժաաթ-
մութեանը, բայց չեն յուրացրել կոմունիստական կուսակ-
ցութեան յուրաքանչյուր անդամի համար անհրաժեշտ տար-
րական քաղաքական դիալեկտիկները՝ կուսակցութեան ծրա-
դիրը, կանոնադրութեանը և կարևորագույն վորոշումները,—
կի-ն և կի՛չ-ն հանձնարարում են դաման ժամանակ այդ-
պիսի կոմունիստների փոխադրել կուսթեկնածու վոչ թե
իրրե կուստույժ, այլ նրանց քաղաքական դաստիարակու-
թեան և լափադուն պարզապէս չեն նպատակով, այն
հաշիւով, վոր մեկ ասարուց հարց զրոյի նշանց նորից կու-

սակցութեան անդամ փոխադրել, յեթե նրանք կկարողանան
այդ մեկ տարվա ընթացքում բարձրացնել կուսակցութեան
անդամի համար անհրաժեշտ քաղաքական գրագիտությունը:

Նկատի ունենանով այն, վոր նույն հանգամանքների
բերմամբ կուսակցութեան թեկնածուներն կազմում քիչ թիվ
չեն կազմում այնպիսի ընկերներ, վորոնք վոչ միայն չու-
նեն թեկնածուի համար անհրաժեշտ տարրական քաղաքա-
կան գիտելիքներ, այլև անկայուն են, բացակայում ե բա-
վարար կոփվածությունը կուսակցական կարգապահութեան
տեսակետից, ԿԿ-ն և ԿՎՀ-ն հանձնարարում են զտման ժա-
մանակ այդպիսի ընկերներին թեկնածուների կարգից փո-
խադրել համակրողների կարգը, այն հաշվով, վոր մեկ տա-
րուց հարց դրվի նրանց դարձյալ թեկնածու փոխադրել
կամ կուսակցութեան անդամ ընդունել, յեթե ստուգումը
ցույց տա, վոր նրանք լիովին հասունացել են դրա հա-
մար»:

Այսպիսով, ընկերներ, նոր պայմանները կուսակցութեան
առանձին անդամներին առաջադրում են նոր՝ ավելի բարդ,
ավելի լուրջ խնդիրներ, քան այդ յեղել ե մինչև այժմ:
Ահա թե ինչու ԿԿ-ն և ԿՎՀ-ն նախատեսում են կուսակ-
ցութեան անդամներին թեկնածու և թեկնածուներին հա-
մակրող փոխադրել: Ի՞նչպես բացատրել ԿԿ-ի և ԿՎՀ-ի այս
վորոշումը: Այդ անպայման կուսակցական տույժ չի հան-
դիսանում: Այդ պետք ե բացատրել այստեղ ներկա յեղող-
ներից յուրաքանչյուրին: Այդ լոկ քաղաքական դաստիա-
րակութեան միջոց ե, այդ մեր կուսակցութեան այն միջո-
ցառումներից ե, վորը պետք ե նպաստի այն բանին, վոր
կուսակցութեան յուրաքանչյուր անդամ ավելի խոր ու լուրջ
մոտեցում ունենա իր աշխատանքի նոր պայմաններին: Հա-
մակրողների վերաբերմամբ այդ չի նշանակում, թե նրանք
առհասարակ արժանի չեն մեր կուսակցութեան շարքերում
լինելու: ԿԿ-ի և ԿՎՀ-ի վորոշումը չպետք ե այդպես հաս-
կանալ: Դա այն միջոցառումներից մեկն ե, վորը լոկ մատ-
նանշում ե, թե տվյալ մոմենտում կուսակցութեան այդ ան-
դամն արժանի չե կրելու կոմունիստի կոչումը, թե թեև նա
ազնիվ ե ու կուսակցութեանը հավատարիմ, բայց նա չունի
քաղաքական դաստիարակութեան այն մակարդակը, վոր


կրի կոճուռնիստի բարձր կոչումը: Այս նշանակում ե, վոր նրանից պահանջվում ե ավելի լուրջ պատրաստութուն:

ԿԿ-ի ե ԿՎՀ-ի վորոշումների մեջ մանրամասն ցուցումներ կան զտման կազմակերպման մասին: Յեա չեա ուզում ձեր ուշադրությունը ծանրացնել զրա վրա: Զեղնից յուրաքանչյուրն անկասկած կարգացած կլինի այդ վորոշումը, վորովհետեւ նա յուրաքանչյուրիս ե վերաբերում: ԿԿ-ն ե ԿՎՀ-ն մասնավորապես առաջարկում են զտման բոլոր հանձնաժողովներին զտումն աշնակա անցկացնել, վոր նա անխտիր ընդգրկի բոլորին՝ այն տեսանկյունով, թե ինչպես են կուսակցության անդամները կատարում այն խնդիրներն ու գիրեկտիվները, վորոնք ծառացած են կուսակցության յուրաքանչյուր անդամի առաջ տվյալ մոմենտում, ե միայն այդ տեսանկյունով ե վորոշվելու, թե կուսակցության այդ անդամն արժանի չե արդյոք կրելու կոճուռնիստի կոչումը:

Յեթե մենք կարողանանք մեր հանձնաժողովների աշխատանքն աշնակա կազմակերպել, վոր ԿԿ-ի ե ԿՎՀ-ի բոլոր ցուցումները կենսագործվեն, ապա անպայման լիակատար յերաշխիք կունենանք այն բանի, վոր մենք այստեղ չափազանց քիչ կսխալվենք: Լ՛նկերներ, դուք գիտեք, վոր յերբ մեր կուսակցությունը զտման հարցն առաջագրեց արոցկիզմի դեմ մղված պայքարի շրջանից հետո, ընկ. Ստալինը փայլուն վերլուծություն տվեց այն բանի, թե ինչով ե դեկտավրավում մեր կուսակցությունը զտումն անցկացնելու անհրաժեշտության խնդրում: Պատասխանելով արոցկիզմի առաջնորդներից մեկին՝ պրենոբրաժենսկուն, նա մատնանշեց, թե կուսակցությունը չի կարող հանդուրժել այն զրությունը, յերբ նրա շարքերում կան տատանվող անդամներ, վորոնք դեմ են դնում մեր կուսակցության գլխավոր գծին: Իհարկե, հնարավոր ե, վոր այժմ ել կդառնան այնպիսի տարրեր, վորոնք դեմ կլինեն մեր կուսակցության այս լուրջ միջոցառումներին, բայց հենց շնորհիվ այն բանի, վոր այդ վորոշումների մեջ միանգամայն պարզ կերպով արվում են մի շարք ցուցումներ, ապա պետք ե յենթադրել, վոր մենք այս անգամ ես կկարողանանք պատվով դուրս գալ ե վոր զտումն անպայման կբարձրացնի մեր շարքերի մարտունակությունը նոր հաղթանակների համար: Անհրաժեշտ ե զրա-

ման ժամանակ ապահովել անկեղծ, ազնիվ ինքնաքննադա-
տությունը, ապահովել անկուսակցական մասսաների ակտիվ
մասնակցությունը, հարկալոր ե խուսափել դտումն անձնա-
կան հաշիվներ մաքրելու համար ոգտագործելուց, անհրա-
ժեշտ ե խուսափել անձնվեր կուսանդամներին վարկարեկե-
լուց, վորին ձգտում ե մեր դտակարդային թշնամին:

Յեթե ԿԿ-ի ե ԿՎՀ-ի այս բոլոր ցուցումները կենսագործ-
վեն, ապա վոչ մի կասկած, վոր մենք կկարողանանք դտումն
անցկացնելու հետևանքով դուրս գալ ավելի ուժեղ ե ավե-
լի մարտունակ, ավելի պատրաստ հաղթահարելու բոլոր այն
դժվարությունները, վորոնք ծառացած են մեր առաջ:



ԳՍՍ Հիմնարար Գիտ. Գրադ.



220035554

[1012]

ԳԻՆԸ 25 ԿՈՂ.

A $\frac{\pi}{35554}$

1 10-00:



Լ. Ս. Ե. ԿԱՐԵ
1933 թ.
ՀԱՅԿ 12/16
Ա. ՄԻՐՅԱԲԵԿՅԱՆ

Օ խիստե քարտի

Քարտիզատ 1933 Էրիվան.